


# ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԵԹՈԴՆԵՐ: ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## ԴԱՍ 1.11 Տեղագրական քարտեզներ: Ազիմուտներ և ուղղության անկյուններ



### Գիտե՞ս որ...

*Այն կիրառվում է, մասնավորապես, ստորգետնյա կառույցների՝ թունելների անցկացման ժամանակ: Կառուցվում են տրանսպորտային՝ երկաթուղային (նաև մետրոպոլիտենը), ավտոմոբիլային, ջրատեխնիկական և այլ թունելներ: Շատ թունելներ որպես կանոն փորվում են ուղիղ գծով: Դրանք, պայմանավորված թունելի երկարությամբ, տեխնիկական բարդ խնդիրներով (փլուզումների, ջրի կորստի կանխում, ստորգետնյա ջրերի հեռացում, բետոնապատում), կարող են փորվել մի քանի տարբեր հորաններից: Այդ հորանները հնարավորություն են տալիս շինարարությունը սկսել տարբեր թունելախորշերից, որոնք սովորաբար կառուցվում են երկու կողմից, մի կողմից՝ ուղիղ ազիմուտով, մյուս կողմից՝ հակադարձ:*

